Հավելված N 68
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզի Վարդենիս
համայնքի ղեկավարի
2022թ օգոստոսի 04-ի  N 192-Ա որոշումով

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ

## 1.Ընդհանուր դրույթներ

**1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը՝**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի (այսուհետ՝ համայնքապետարան) աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնի պետի տեղակալ (այսուհետ՝ բաժնի պետի տեղակալ):

(ծածկագիր՝ 2.2-2)

**1.2. Ենթակա և հաշվետու է՝**

Բաժնի պետի տեղակալը անմիջականորեն ենթակա և հաշվետու է բաժնի պետին:

**1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները՝**

Բաժնի պետի տեղակալի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի պետը կամ բաժնի գլխավոր մասնագետ աշխատակազմի քարտուղարի հայեցողությամբ:

**1.4. Աշխատավայրը՝**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, ք.Վարդենիս
Հ. Անդրեասյան 4:

## 2. Պաշտոնի բնութագիրը

**2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները՝**

1.բաժնում համակարգում է, ինչպես նաև բաժնի պետի հանձնարարությամբ իրեն հանձնարարված բնագավառում կազմակերպում և ծրագրում է աշխատանքները:
2.օժանդակում է բաժնի ավելի ցածր պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողների աշխատանքներին, ինչպես նաև մասնակցում է բաժնի աշխատանքների ծրագրմանը:

3. կատարում է բաժնի պետի հանձնարարականները:

**Իրավունքները՝**

4.իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ ներկայացնել բաժնի պետին:

5.իր լիազորությունների սահմաններում նախապատրաստել և բաժնի պետին ներկայացնել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ:

6.սահմանված կարգով նախապատրաստել և ներկայացնել համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, աշխատակազմի քարտուղարի հրամանների, աշխատակազմին վերաբերող ծրագրային փաստաթղթերի, պետական մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց գրությունների նախագծեր:

**Պարտականությունները՝**

7.օրենքով սահմանված տուրքերն ու վճարները չվճարող անձանց նկատմամբ համապատասխան միջոցներ կիրառելու համար առաջարկություն ներկայացնել բաժնի պետին:

8.բաժնի պետի հանձնարարությամբ համաձայնեցված բնակավայրերի վարչական ղեկավարների հետ համայնքի բնակավայրերում բաժնի մասնագետների մասնակցությամբ կազմակերպել շրջայցեր:

9.համակարգել սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ և բաժնին վերաբերող փաստաթղթերի կազումը և համապատասխան աշխատակիցներին տրամադրումը:

10.կազմակերպել համայնքի սեփականություն հանդիսացող շինությունների վերաբերյալ անհրաժեշտ նյութերի մուտքագրումը տեղեկատվական բազա:

11.յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ կատարած աշխատանքների վերաբերյալ կիսամյակային հաշվետվություն ներկայացնել իր անմիջական ղեկավարին:

**3. Կազմակերպական շրջանակը**

**3.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը՝**

Բաժնում համակարգում է, ինչպես նաև բաժնի պետի հանձնարարությամբ իրեն հանձնարարված բնագավառում կազմակերպում և ծրագրում է աշխատանքները, մասնակցում է աշխատակազմի աշխատանքների ծրագրմանը: Պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները ու տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

**3.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները՝**

Մասնակցում է որոշումների կայացմանը, վերլուծմանը և գնահատմանը:

**3.3. Շփումները և ներկայացուցչությունը՝**

Բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում, աշխատակազմի ներսում՝ աշխատակազմի քարտուղարի, աշխատակազմի այլ աշխատողների հետ: Առանձին դեպքերում բաժնի պետի հանձնարարությամբ աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ:

**3.4. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը՝**

Մասնակցում է բաժնի առջև դրված խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին:

**4. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

**4.1. Կրթություն, որակավորման աստիճանը՝**

Բարձրագույն կրթություն:

**4.2. Մասնագիտական գիտելիքները և հմտությունները՝**

ՀՀ <<Սահմանադրության>>, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, ՀՀ <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի>>, ՀՀ <<Հողային օրենսգրքի>> աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն: Տիրապետում է ռուսերենին (ազատ) և մեկ այլ օտար (կարդում է, կարողանում է բացատրվել) լեզվի:

**4.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը՝**

Համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, իսկ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի դեպքում՝ առնվազն երեք տարվա մասնագիտական գործունեության փորձ աուդիտի ոլորտում:

**5. Համայնքային ծառայության դասային աստիճանը**

Առաջատար մասնագետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան: